Դասընթաց

Երեխաների պաշտպանությունը բռնություններից

Դասընթացավար Անահիտ Գևորգյան

Այս դասընթացի ստեղծման նպատակն է մասնագետների ուշադրությունը կենտրոնացնել երեխաների հանդեպ տարատեսակ բռնությունների գործադրման երևույթի բացահայտման և ճանաչման հմտությունների զարգացման, ինչպես նաև երեխային օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ ռեսուրսների համախմբման և ակտիվացման առկա հնարավորությունների վրա:

Երեխաների հանդեպ բռնությունը բարդ երևույթ է, որի բնույթը, առաջ բերող գործոնները, ինչպես նաև կանխարգելման արդյունավետ ռազմավարությունները էականորեն տարբերվում են՝ կախված զոհի տարիքից, բռնության կիրառման պայմաններից և զոհի ու բռնացողի միջև փոխհարաբերությունների բնույթից: Բռնության, և դրա հետևանքների բնույթն ու ազդեցությունը կարող են չափազանց տարբեր լինել. որոշ ծայրահեղ դեպքերում երեխաների հանդեպ բռնության կիրառումը անգամ կարող է հանգեցնել երեխայի մահվան: Այնուամենայնիվ, դեպքերի մեծ մասի ժամանակ ինքնին ֆիզիկական վնասը համեմատաբար պակաս վտանգավոր ազդեցություն ունի երեխայի նյարդային, ճանաչողական և էմոցիոնալ զարգացման ու ընդհանուր առողջական վիճակի վրա, քան դրանից բխող հոգեբանական հետևանքները՝ հատկապես այն դեպքերում, երբ բռնարարքների գործադրումը շարունակական բնույթ ունի:

Հայաստանում, երեխաների հանդեպ բռնությունների թեման շարունակում է մնալ չբացված, չբացատրված և չարծագանքված՝ գաղափարական, հայեցակարգային և օրենսդրական մակարդակներում, չնայած նկատելի են որոշ դրական փոփոխություններ: Երևույթի որոշ դրսևորումների վերաբերյալ սկանդալային բացահայտումները հանրության մեջ թերևս միայն զայրույթ են առաջացնում՝ առանց հանգելու ցանկալի հետևությունների, մինչդեռ նման վերաբերմունքից երեխաներին պաշտպանելու միակ իրատեսական երաշխիքը կարող է լինել երեխաների և նրանց հետ առնչվող չափահասների հետ համակարգված և ուղղորդված աշխատանքը:

Դասընթացի կառուցվածքը

Դասընթացը ներառում է 13 պարապմունքների շարք: Դրանք խմբավորված են որպես մոդուլներ՝ համապատասխան թեմաներով: Պարապմունքներից յուրաքանչյուրը հետապնդում է կոնկրետ նպատակ և խնդիրներ: Յուրաքանչյուր պարապմունքի համար նախատեսված է որոշակի տեսական նյութ, որից օգտվելով հետագայում դասընթացի վարողը կարող է այն մշակել և վերաձևակերպել՝ ,դարձնելով սեփական ասելիք: Պարապմունքները ենթադրում են ինտերակտիվ աշխատանք դասընթացի մասնակիցների հետ՝ հարց ու պատասխանի, խմբային աշխատանքների և քննարկումների միջոցով, ինչպես նաև հնարավորության ստեղծում, որ մասնակիցները ստացած տեղեկատվությունն ,անցկացնեն իրենց միջով, կապ ստեղծեն տեսական նյութի և կոնկրետ դեպքերի մեկնաբանությունների հետ:

Դասընթացի վարողը հատուկ հոգ է տանում ունկնդիրների զգացողությունների մասին, քանի որ թեման նրանցից բավական շատ հոգեկան էներգիա է պահանջում:

Դասընթացի ընդհանուր տևողությունը՝ 4 օր է:

Մեկ մոդուլի օրինակ

Յուրաքանչյուր օր Տևողությունը՝ 6, 5 ժամ + 1 ժամ ճաշի և 0, 5 ժամ սուրճի ընդմիջումների համար
Անհրաժեշտ նյութեր՝ մեծ թղթեր, մարկերներ, ԵԻ մասին կեոնվենցիայի օրինակներ՝ մասնակիցների թվով, UNICEF-ի ֆիլմը

Տեսական նյութերը ներկայացվում են PPT-ների միջոցով:

Մոդուլ 1. «Երեխաների հանդեպ բռնությունները որպես արդիական սոցիալական հիմնախնդիր. տարածվածությունը, ընկալումը և երևույթի դեմ պայքարի համատեքստը»

Նպատակ *Թեմայի արդիականության և մասնագետների իրազեկվածության և դերակատարման նշանակալիության հիմնավորումը՝ իրավական և սոցիալական համատեքստում*

Մոդուլի կառուցվածքը

Մաս	*Բովանդակությունը*	*Տևողությունը*
I	Նախապատրաստական մաս	15 +15
II	Ներածություն. Ինչու՞ է կարևոր նման վերապատրաստում անցնելը	15
	Քննարկում	15
III	Երեխաների հանդեպ բռնությունների գործադրման երևույթի պատկերը աշխարհում և Հայաստանում. լրացուցիչ նյութերի բաժանում և քննարկում	45
IV	Ֆիլմի դիտում (UNICEF)	15
	Երևույթի ընկալման և մեկնաբանման խնդիրները. Քննարկում, տպավորությունների փոխանակում	30
V	Երևույթի ընկալման գաղափարական և սոցիալական համատեքստը	30
	Խմբային աշխատանք և արդյունքների ամփոփում	45
VI	Երևույթի դեմ պայքարի իրավական համատեքստը	45
VII	Խմբային աշխատանք.«Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան՝ երեխաներին բռնություններից պաշտպանելու մասին»	60
	Քննարկում և օրվա ամփոփում	30
VIII	Մոդուլի գնահատում	15